«Ռուս-Հայկական Համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպություն

Հաստատում եմ՝

Ռեկտոր՝ Է.Մ. Սանդոյան

№ 9 «15» Դեկտեմբեր 2026թ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մասնագիտություն ՝ 042802.00.7 Իրավական ուսումնասիրություններ (առկա ուսուցում)

Կրթական ծրագիր՝042802.03.7 Կրիմինալիստիկա (մեկամյա ծրագիր)

1.ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ

042802.03.7 «Կրիմինալիստիկա» կրթական ծրագիր, իրագործվող «Ռուս-Հայկական համալսարան» բարձրագույն կրթության միջպետական կրթական կազմակերպության կողմից 042802.00.7 «Իրավական ուսումնասիրություններ»:

Մագիստրոսական կրթական ծրագիրը իրագործվում է առկա կրթության ձևով:

Կրթական ծրագրով ուսումնառության ժամկետը կազմում է 1 տարի:

Մագիստրոսական կրթական ծրագրի ծավալը կազմում է 60 կրեդիտ:

2. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

2.1. Ծրագրի բովանդակությունը, նպատակի և խնդիրների մանրամասն նկարագրությունը, կրթական ծրագրի ակտուալությունը և յուրահատկությունը, տվյալ մասնագիտության շրջանավարտների կարիքը աշխատաշուկայում:

Հասարակական հարաբերությունների զարգացման ներկայիս ընթացքըվկայում է իրավական գիտելիքների որոշակի ոլորտների ինտեգրման, երկրիքաղաքական եւ տնտեսական կյանքի գլոբալ մի շարք հիմնախնդիրների լուծմանհամար համապարփակ հետազոտության անհրաժեշտության եւ կարեւորությանմասին: Բացառություն չէ նաեւ կրիմինալիստիկան, որը նպաստում է հանցագործությունների բացահայտման, քննության եւ կանխարգելման գործնական առաջադրանքների լուծմանը:

Մագիստրոսական ծրագրի առանձնահատկությունն այն է, որ ուսումնասիրվելու են բազմաթիվ կրիմինալիստիկական եւ այլ փորձաքննությունների համար կիրառվող ժամանակակից կրիմինալիստիկական տեխնոլոգիաներ: Այս մագիստրոսական ծրագրի յուրահատկությունն ուառանցքային առավելությունն ուսումնառվող առարկաների լայն շրջանակների համադրությունն է, ինչը միջոլորտային հետազոտությունների կարեւոր նախապայմաններից է: Այն ներառում է գիտելիքների տարբեր ճյուղեր, ինչպես

իրավական, այնպես էլ գիտական այլ ոլորտներից (հոգեբանություն, լեզվաբանություն, բժշկություն):

Դասընթացի շրջանակներում ուսանողները ձեռք են բերում խորը եւ համապարփակ գիտելիքներ՝ կրիմինալիստիկայի գիտության բնագավառում, ինչը հետագայում նրանց հնարավորություն կտա դառնալ կրիմինալիստիկայի մի շարք ոլորտների փորձագետներ: Ավելին, ծրագիրը ներառում է քրեական դատավարության հիմնարար դրույթների, օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքների օգտագործման, դատական փորձաքննության առանձնահատկությունների եւ դրանց տեսակների ուսումնասիրություն, ինչն ընդլայնում է հետագայում աշխատանքի հնարավորությունների շրջանակը:

Պրակտիկայի միջոցով դրվում է ապագա աշխատավայրի հետ ուսանողի սերտ կապի հիմնաքարը: Պրակտիկայի ընթացքում ուսանողները ոչ միայն ձեռք են բերում անհրաժեշտ գործնական հմտություններ, այլեւ նյութեր են հավաքում մագիստրոսական թեզի համար: «Կրիմինալիստիկա» մագիստրոսական ծրագիրն ունի մեծ սոցիալական նշանակություն: Ծրագրի շրջանակներում պատրաստվում են բարձրորակ մագիստրոսներ՝ օժտված բարձր իրավագիտակցությամբ, մասնագիտակա նէթիկայով եւ իրավաբանական մտածողությամբ: «Կրիմինալիստիկա» մագիստրոսական ծրագրի հիմնական նպատակներն ու խնդիրներն են մագիստրոսների մոտ ընդհանուր մշակութային եւ մասնագիտական ունակությունների ձեւավորումը, ինչպես նաեւ նրանց անձնական որակների զարգացումը:

Մագիստրոսական ծրագրի **նպատակն է**՝ ձևավորել, ընդլայնել, խորացնել և կատարելագործել ուսանողների տեսական գիտելիքները ժամանակակից կրիմինալիստիկայի տեսության և պրակտիկայի արդի հիմնախնդիրների վերաբերյալ, պատրաստել բարձր որակավորում ունեցող մասնագետներ, որոնք ունակ են հմտորեն կիրառել ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները մասնագիտական գործունեության, մասնավորպաես, հանցագործությունների բացահայտման, քննության ու

կանխման, ինչպես նաև քրեական գործերով իրականացվող դատական գործունեության ընթացքում:

Մագիստրոսական ծրագրի **հիմնական խնդիրները**.

- խթանել, ստեղծել եւ իրականացնել տարատեսակ կրթական գործունեություն,
- ձեռք բերել հմտություններ՝ լուծելու գործնական խնդիրներ՝ օգտագործելով տարբեր գիտական մեթոդներ,
- ուսումնասիրել եւ մեկնաբանել ոլորտի մասնագետների գիտական նյութերը և դրանք կիրառել ամենօրյա իրավիճակներում,
- ստեղծագործական մոտեցում ցուցաբերել հանցագործությունների քննության պլանավորման հիմնական փուլերը նախագծելիս,
- իրենց աշխատանքում կիրառել օպերատիվ-հետախուզական գործունեության արդյունքները,
- կազմել դատավարական փաստաթղթեր:

Այս մագիստրոսական ծրագրի շրջանավարտները պահանջված են ՀՀ Փորձագիտական բյուրոյում, ՀՀ Քննչական կոմիտեում, ՀՀ ոստիկանության փորձագիտական վարչությունում, «Հայաստանի Հանրապետության փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ում, ՀՀ Ոստիկանության փորձաքրեագիտության վարչությունում, դատական համակարգում, նախաքննություն և օպերատիվ-հետախուզական գորև այլ կառույցներում:

2.2. Մագիստրոսական կրթական ծրագրի յուրացման մեջ մտնում են ուսումնական և արտադրողական պրակտիկաներ `

- Ուսումնական պրակտիկայի ձևերը՝
  - Գիտահետազոտական աշխատանք
- Արտադրական պրակտիկայի ձևերը՝

- Գիտահետազոտական պրակտիկա
- Նախադիպլոմային պրակտիկա

2.3 Պետական ավարտական ատեստացիայի մասի մեջ կարող են մտնել՝

- Մագիստրոսական թեզի պաշտպանություն

3. ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱԿՆԿԱԼՎՈՂ ԿՐԹԱԿԱՆ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Իրավագիտության մագիստրոսի աստիճանի հավակնորդը պետքէ ունենա՝

Գիտելիքները ՝

1) Քրեական դատավարության իրավունքի և կրիմինալիստիկայի սկզբունքների, ինստիտուտների, նորմերի ծագումնաբանության, էության և կիրառման գործընթացի վերաբերյալ մասնագիտական խոր, համակարգված և համակողմանի տեսական և գործնական գիտելիք, այդ թվում՝ միջգիտակարգային և իրավահամեմատական համատեքստում:
2) Գիտական հետազոտությունների ընդհանուր և սոցիալ-իրավական մեթոդաբանության վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիք։
3) Իրավաընկալման հայեցակարգերի, քրեական դատավարության իրավունքի և կրիմինալիստիկայի զարգացման եղանակների, ինչպես նաև՝ իրավագոյացման վերաբերյալ խոր և համակողմանի գիտելիք։
4) խորը գիտելիքներ հիմնարար գիտելիքներ քրեական դատավարության, կրիմինալիստիկայի բնագավառում;
5) խորացված կիրառական գիտելիքներ կրիմինալիստիկայի տեխնիկայի,
6) տակտիկայի եւ մեթոդիկայի գործնական հիմնախնդիրների վերաբերյալ;
7) խորացված կիրառական գիտելիքներ փորձագիտական ոլորտում, որոնքկնպաստեն հանցավորության հետ պայքարի արդյունավետությանբարձրացմանը;

8) խորացված կիրառական գիտելիքներ՝ ժամանակակից կրիմինալիստիկայումառկա մոտեցումների ու մեթոդների մասին, ոլորտի հետազոտություններինախագծման, իրականացման եւ մեկնաբանման վերաբերյալ;
9) իրավական գիտելիքներ՝ հանցագործությունների առանձին տեսակներիքննության եւ բացահայտման մեթոդիկայի վերաբերյալ;
10) բազային միջառարկայական գիտելիքներ, որոնք կնպաստենկրիմինալիստիկայի գիտության եւ հմտությունների յուրացմանը:

Հմտությունները՝

- *գիտելիքի կիրառման հմտությունները՝*

1. Կարող է ինքնուրույն և համակողմանիորեն կիրառել մասնագիտական գիտելիքները նոր և անծանոթ իրադրություններում տեսական և գործնական իրավական հիմնախնդիրների լուծման համար:
2. Կարող է ինքնուրույն գտնել, դասակարգել և համակողմանի ու համակարգված մոտեցմամբ փաստարկված մեկնաբանել օրենսդրական կամ այլ տեղեկատվություն, այդ թվում՝ օտարալեզու, որն անհրաժեշտ է մասնագիտացման ոլորտում խնդրի լուծման համար:
3. Կարող է ինքնուրույն օգտագործել գիտական հետազոտության մեթոդներ՝ մասնագիտական գործունեություն ծավալելիս և անհրաժեշտ հետազոտություններ իրականացնելիս:
4. Կարող է ինքնուրույն կողմնորոշվել իր մասնագիտացման ոլորտի իրավական հիմնախնդիրները լուծելիս և դրանց վերաբերյալ ներկայացնել իր փաստարկված դիրքորոշումը:
5. Կարող է հետազոտական և նորարարական գործունեություն իրականացնելիս համակցել տարբեր ոլորտների գիտելիքներ և զարգացնել նոր գաղափարներ ու տեակետներ: Իրավաստեղծման և մեկնաբանման ժամանակ հասկանալ

քաղաքական, սոցիալական, տնտեսական, պատմական, անձնային և հոգեբանական գործոնները:

Հաղորդակցման, ՏՀՏ և տվյալների հետ աշխատելու կարողություններ

1. Կարող է մասնագիտական և ոչ մասնագիտական հանրությանը համակողմանիորեն և փաստարկվածկերպով ներկայացնել, բացատրել, ինչպես նաև՝ ստանալ իրավագիտության ոլորտին առնչվող տեղեկատվություն, գաղափարներ,բարդությանտարբերաստիճանի խնդիրներ և լուծումներ, առաջարկել օրինական, այդ թվում՝ այլընտրանքային լուծումներ:
2. Կարող է իր գործունեության ընթացքում արհեստավարժ կերպով կիրառել ՏՀՏ-ներ և այլ մասնագիտական գործիքներ՝ առանձին բարդություն ներկայացնող իրավական հիմնախնդիրների լուծումն ապահովելու, ինչպես նաև՝ հետազոտություն իրականացնելու համար:
3. Կարող է ինքնուրույն հավաքել, վերլուծել, գնահատել և մեկնաբանել իրավական հիմնախնդիրներին վերաբերող տվյալներ՝ արդյունավետորեն համադրելով առաջնային և երկրորդային աղբյուրները:
4. Կարող է հետևել մասնագիտական բարեվարքության (էթիկայի) կանոններին՝ պատասխանատվությամբ իրականացնելով իր մասնագիտական գործառույթները:

Ընդհանրական իմացական կարողություններ

Կարող է դրսևորել վերլուծական, ստեղծագործական, քննական և նորարարական մոտեցում՝ մասնագիտացման ոլորտի, ինչպես նաև՝ հետազոտական հիմնախնդիրների բացահայտման, լուծման և նոր գաղափարներիզ արգացման համար:

***Կարողունակությունը*՝**

1. Ունակ է՝ ինքնուրույն ծավալելու լիարժեք մասնագիտական գործունեություն,

ինչպես նաև գիտական ղեկավարման ներքո կատարելու անհրաժեշտ հետազոտություններ իրավագիտության ոլորտում:

2. Ունակ է՝աշխատելու թիմում և (կամ) ղեկավարելու այն:
3. Ունակ է՝ աշխատելու բազմամշակութային միջավայրում, արդյունավետ կերպով համագործակցելու սոցիալական տարբեր խմբերի և դրանց ներկայացուցիչների հետ, նպաստելու այլ անձանց իրավական զարգացմանը:
4. Ունակ է՝ բացահայտելու սեփական կրթական կարիքները և ինքնակրթվելու, ընտրելու մասնագիտական
5. գործունեության զարգացման ուղին, պարբերաբար բարձրացնելու մասնագիտական որակավորումը, ինտեգրվելու հարափոփոխ բազմամշակութային աշխատանքային միջավայրին, գործելու պատասխանատու և ազնվորեն:
6. Տիրապետում է բավարար գիտելիքների և կարողությունների՝ բարձրագույն կրթության երրորդ մակարդակում իրավագիտության բնագավառում ուսումը շարունակելու համար:

Կրթական ծրագրի շրջանավարտների ակնկալվող մասնագիտական գործունեության տեսակները

Իրավապահ (իրավակիրառ) գործունեության ոլորտում.

- օրինականության եւ իրավակարգի ամրապնդման, անձանց, հասարակության, պետության անվտանգության ապահովմանն ուղղված պաշտոնեական պարտականությունների կատարման պատրաստվածություն,
- հանցագործությունների եւ իրավախախտումների կանխարգելում, հայտնաբերում, բացահայտում, դրանց կատարմանը նպաստող պայմանների ու պատճառների վերացում,

- օրենքով սահմանված պահանջներին խիստ համապատասխան իրավական գործողությունների կատարում,
- դատավարական փաստաթղթերի պատշաճ մշակում եւ կազմում:
- պետության, հասարակության շահերի պաշտպանություն,
- հանցագործության քննության, անձանց հետախուզման իրականացում,
- մասնավոր, պետական եւ համայնքային սեփականության պաշտպանության ապահովում,
- իրավաբանական նշանակություն ունեցող տեղեկատվության ստուգում, վերլուծություն եւ գնահատում,
- կրիմինալիստիկական մեթոդների ու միջոցների, քննչական գործողություններ իրականացնելու տակտիկական հնարքների օգտագործում,
- իրավապահ մարմիններում կրիմինալիստիկական տեխնիկայի արդյունավետ օգտագործում,
- հոգեբանական միջոցների, մեթոդների, տեխնիկայի կիրառում:

Փորձագիտահորհրդատվական գործունեության ոլորտում.

- որակյալ իրավաբանական եզրակացության տրամադրում,
- նորմատիվ իրավական ակտերի նախագծերի իրավական փորձաքննության իրականացում:

Գիտահետազոտական գործունեության ոլորտում.

- կիրառական գիտական հետազոտությունների իրականացում, արդյունքների վերլուծություն եւ մշակում,
- միջազգային հետազոտությունների փորձի ուսումնասիրություն ու կիրառում:

Կրթական ծրագրի պահանջարկը.

Առաջարկվող մագիստրոսական կրթական ծրագրի մշակման ընթացքումկատարվել է աշխատաշուկայի հետազոտություն եւ կազմակերպվել են քննարկումներ՝ գործատուների կարիքների ու շրջանավարտների հնարավոր աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվություն ստանալու նպատակով:

Հստակեցվել է այն գիտական հաստատությունների, պետական կառույցների շրջանակը, որ արդեն իսկ ունի իրավագետ-կրիմինալիստների կարիք:

ՄԿԾ շրջանավարտները պահանջված կլինեն տարբեր պետական հաստատություններում եւ կազմակերպություններում, ինչպիսիք են փորձագիտական կենտրոնները, դատարանները, դատախազությունը, իրավապահ մարմինները, գիտահետազոտական լաբորատորիաները, բարձրագույն ուսումնական հաստատությունները: